ՆԱԶԱՐ.– Ի՞նչ պակաս մարդ եմ, որ հետեւս աւազակ չընկնի: Փախչելն էլ մի հունար է, բաս ի՞նչ իգիթ եմ, կփախչեմ է՛լ, կփախցնեմ է՛լ, կզարկեմ է՛լ, կզարկուեմ է՛լ: Իգիթի բանն էդպէս է: Լաւ, լաւ, հօրդ օղորմի: Հաց գցի ուտեմ:

ՈՒՍՏԻԱՆ.– Գրողս կեր: Շահզադա՞ ես, հրամայում ես:

ՆԱԶԱՐ.– Ես գիտեմ իմ բանը: (Նստում է թոնրի ափին: Ուստիանը ճրագ է վառում, բերում է խոնչան չինարու տակ, հաց է փռում եւ կերակուր դնում) Մթնե՛ց… հը՛մ, աչք աչքի չի գալիս… Ես ասեմ՝ գիշերը գեղին վրայ կտան, մեր տունն էլ գեղի ծերին: Կնիկ, թուրս պատրաստ պահի:

ՄԻ ՁԱՅՆ.– (Դրսից) Էհե՛յ…

ՆԱԶԱՐ.– (Մտնելով խրճիթը եւ գլուխը դռնից դուրս հանելով) Մի տես՝ ո՞վ էր…Դրսի դուռը կողպի՛ր:

ՈՒՍՏԻԱՆ.– (Հանգիստ ուտում է:)

ՁԱՅՆԸ.– (Մօտենալով) Հրես գալի՛ս եմ, հրես գալի՛ս եմ, հրես գալի՛ս եմ…

ՆԱԶԱՐ.– Ի՛է՛է՛. – Դուռը չբանաս, արանքից մտիկ արա… (Ձայնը հեռանում է) Գնա՛ց, (ձայնը աւելի է հեռանում:) Թէ մին էլ կգա՛, ես նրան ցոյց կտամ: Երեւի չէր իմանում, թէ ում դռանն էր գոռում: (Ականջ է դնում) Ը՛հ, փախա՛ւ… էս է՝ գեղամիջում հասկացրին իրեն, որ Նազարն էստեղ է: (Դուրս գալով խրճիթից) Ձենը Դաղստանի էր: Ո՞վ է իմանում լեզգի Հաջի Մուրադն էր: Ախր ասում եմ ձենը ծանօթ է: Հա՛յ գիդի. հա՛… ի՞նչ օրեր ենք անցկացրել միասին: Մի իգիթի կնկա շնորհք չունեցար, թէ տուն կանչէիր: Լաւ, էգուց ինքս կերթամ սար, տուն կբերեմ: (Նստում է եւ սկսում ուտել:)

ՈՒՍՏԻԱՆ.– Էրնա՛կ ինձ: Մարդս իգիթ, ես ոսկէ պալատում լըվլըւում եմ:

ՆԱԶԱՐ.– Տղամարդու պատիւ պահի, ամէն ինչ կլինի:

ՈՒՍՏԻԱՆ.– Քեզ նման տղամարդը չունենամ էլ կլինի:

ՆԱԶԱՐ.– Ինձ պէս տղամարդը չունենաս: Էդ ի՞նչ տղամարդ ես գտել, որ ինձ հաւան չես: Աչքդ դուրսն է, հա՛…: Լիսդ կթռցնեմ: Ինձ Քաջ Նազար կասեն: Համբերութիւնից մի հանի, թէ չէ դագանակը պուճախից քաշող ենք, հա՛…

ՈՒՍՏԻԱՆ.– (Վեր է թռչում) Բո՛… Դո՞ւ ես դագանակը քաշողը: (Վեր է թռչում եւ դագանակն անկիւնից վերցնելով հարձակւում է Նազարի վրայ) Դէ քաշի՛ տեսնեմ դագանակը:

ՆԱԶԱՐ.– Վա՛հ, վա՛հ, վա՛հ…(Ցատկում է տեղից եւ պտտւում չինարու չորս կողմը, աշխատելով ազատուել դագանակի հարուածից) Մի վախի, բան չեմ անի: Դեսը տուր դագանակը: